



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

15 մարտի 2022 թվական

Ց-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2-ՐԴ ՆԻՍ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԲԱՆԱՎՈՐ ՀԱՐՑԵՐԻ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ

ՍՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ժամը 17.45

Հրայր Սարգսյան

-Ավագանու հարգելի անդամներ, հարց ու պատասխանի համար գրանցվել է
ավագանու 13 անդամ՝

Պավել Սարգսյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Արմեն Ներսիսյան՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցություն,

Անի Խաչատրյան՝ ԼՈՒՅՍ խմբակցություն,

Արման Անտոնյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Միքայել Մանրիկյան՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցություն,

Տիգրան Գալստյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Մարկոս Հարությունյան՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցություն,

Լևոն Զաքարյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Մանուել Մարգարյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Դիանա Քերոբյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Անուշ Քլոյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Սերգեյ Գյոզալյան՝ Երևան քաղաքի ավագանու անդամ.

Արման Բաբաջանյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն:

Առաջին հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Պավել Սարգսյան, խնդրեմ:

Պավել Սարգսյան

-Շնորհակալություն, պարոն քաղաքապետ: Հարցս վերաբերում է առևտրի ոլորտին:

Անցյալ տարի բավականին շատ աշխատանքներ իրականացվեցին փողոցային առևտրի ուղղությամբ և որոշակի հաջողություններ գրանցվեցին, մասնավորապես՝ փոքր կենտրոնում, որտեղ մեծ է զբոսաշրջիկների հոսքը, սակայն կան որոշակի իրավական բացթողումներ և դա թույլ չի տալիս ամբողջ գործիքակազմով կարգավորել փողոցային առևտրի հարցը: Հյուսիսային պողոտայով քայլելիս հանդիպում ես բազմաթիվ հուշանվերներ և խաղալիքներ վաճառողների: Նույն պատկերն է նաև Ազատության հրապարակում՝ վարձով են տրվում հեծանիվներ և այլն: Ուզում եմ հասկանալ. ի՞նչ առաջարկներ կամ մոտեցումներ կան, որպեսզի, չունենալով ամբողջական գործիքակազմ, հնարավորություն ունենանք շտկելու փողոցային առևտրի խնդիրը:

Հրաչյա Սարգսյան

-Շնորհակալություն, հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանը:

Սուրեն Գրիգորյան

-Պարոն Սարգսյան, երեկ մենք այդ հարցի հետ կապված, Ձեր նախաձեռնությամբ, աշխատանքային կարգով մանրակրկիտ քննարկում ենք ունեցել: Ակնկալել, որ կունենանք նույն արդյունավետությունը օրենքի բացակայության պայմաններում, ինչ որ օրենքի առկայության պայմաններում, անհեռատես կլինի: Եթե կարողանանք նույն արդյունքին հասնել առանց այդ գործիքակազմի ավելացման, ապա հարց է առաջանում, թե ինչու՞ ենք առհասարակ նման նախագիծ նախաձեռնում: Ինչ վերաբերում է ընդհանուր այլ խութերին, ինձ համար տարակուսելի է, թե ինչու եք ուզում, որ խնդրահարույց կետերի մասին հանրայնորեն ու ի լուր աշխարհի խոսենք: Եթե կարծում եք, որ դրանից արդյունավետությունը կբարձրանա, եկեք խոսենք, խնդիր չկա:

Պավել Սարգսյան

-Այսինքն ունենք խնդիր, և խնդրի վերաբերյալ առաջարկը, թե ինչպես պետք է կարգավորվի, մենք այս պահին չունեն՞ք:

Սուրեն Գրիգորյան

-Ոչ, պարոն Սարգսյան, մենք ունենք սահմանափակ գործիքակազմ, որի լրամշակման և ավելի լայն գործիքակազմ ունենալու հետ կապված, ինչպես երեկ ներկայացրեցինք, կա օրենքի նախագիծ, որը մշակվել է և պետք է համապատասխան փուլեր անցնելով ընդունվի ՀՀ ազգային ժողովի կողմից, որպեսզի այս ոլորտում ունենանք ավելի բարվոք վիճակ:

Պավել Սարգսյան

-Երկրորդ հարցս հնչեցնեմ, պարոն քաղաքապետ. խնդրում եմ մեր քաղաքացիներին մանրամասն տեղեկացնեք տրանսպորտի ոլորտում սպասվող փոփոխությունների մասին:

Հրաչյա Սարգսյան

-Շնորհակալություն, պարոն Սարգսյան: Ինչպես նշեցի, ապրիլի 1-ից կունենանք 3-4 երթուղի, որոնք նոր ենք շահագործելու, դրա մասին մամուլով հավելյալ կլուսաբանվի: Սրանք այն երթուղիներն են, որոնցով գազելների փոխարեն շահագործվելու են ավտոբուսները: Կայացել է նաև հանրային տրանսպորտի կառավարման կենտրոնի մրցույթը, կարծում եմ մինչև շաբաթվա վերջ կկնքվի պայմանագիր: Ընթացիկ վերահսկման համար արդեն կատարված է տեսախցիկների կենտրոնացված համակարգի ծրագրային ապահովումը, որը հնարավորություն կտա վերահսկողություն իրականացնել, մինչև համակարգված կառավարման կենտրոն ունենալը: Նաև գիտեք, որ 2020 թվականից ակտիվ աշխատում ենք միջազգային մեր գործընկերների հետ, որպեսզի նոր ավտոբուսներ ձեռք բերենք: Կարծում եմ, մինչև ս.թ. մարտ ամսվա վերջ արդեն կունենանք հստակ ժամկետներով կնքված պայմանագիր, և, հուսով եմ, մինչև տարվա վերջ Երևանում կունենանք 12 մետրանոց ավտոբուսներ: Ավագանու այսօրվա նիստում բյուջեում փոփոխություններ ենք իրականացրել, գումար ենք հատկացրել տրոլեյբուսների ձեռքբերման համար: Պետք է հայտարարենք մրցույթ, որը, կարծում եմ, հաջողությամբ կկայանա, և տրանսպորտի մասով այդ փոփոխությունները կկատարվեն: Ինչպես նշեցի, բացի տրանսպորտային միջոցների ձեռքբերումից, երթևեկության կազմակերպման հետ կապված խնդիրներ պետք է լուծենք: Այս տարվանից լուսացույցերի տեխնիկական

սպասարկումն իրականացնելու է Երևան համայնքը, իսկ երթևեկության կազմակերպումը պետք է իրականացնենք ոստիկանության հետ համատեղ: Արդեն ունենք փողոցների քարտեզագրում: 2021 թվականից կար հայտարարված հետիոտնային կանչի լուսացույցերի մրցույթ, որով 63 հետիոտնային անցումներում ունենալու ենք հետիոտնային կանչի լուսացույցեր, իսկ այս տարի 12-ի մրցույթները նոր պետք է հայտարարենք, հավելյալ ևս 16-ն ունենք: Կարելի է ասել, որ 90%-ով հետիոտնային կանչի լուսացույցերի հարցը Երևան համայնքում լուծված կլինի:

Ունենք պայմանական 10 կանգառասրահի մրցույթ, որը կիրապարակվի մոտ օրերին, ինչից հետո մենք բանակցություններ կունենանք այդ կանգառասրահներն սպասարկող կազմակերպության հետ, որպեսզի կանգառասրահները փոփոխության ենթարկենք, նոր կանգառասրահներ ունենանք: Այս պահին նաև հաշվարկներ ենք անում, որ 13 խաչմերուկում խելացի լուսացույցեր դնենք, այժմ գրվում է տեխնիկական բնութագիրը:

Ճանապարհային նշանների տեղադրումը պատվիրակված լիազորություն է, ինչը նույնպես պետք է անի Երևան համայնքը: Մրցույթը կայացել է, հաղթող կազմակերպությունը կա, և մի քանի վարչական շրջաններում անվտանգությունն ապահովելու համար, ամբողջությամբ, ստանդարտներին համապատասխան կկահավորենք լուսացույցերով և նշաններով:

Կան փողոցներ, որտեղով բեռնատար մեքենաների երթևեկությունն արգելված է: Այդ ուղղությամբ վերահսկողություն իրականացնելու համար ծրագրային համապատասխան միջոցներ արդեն ձեռք ենք բերել, այժմ իրավական փոփոխություններ պետք է կատարենք, որպեսզի իրավախախտումներն արձանագրենք և տրամադրենք ոստիկանությանը՝ վարչական պատասխանատվության ենթարկելու համար: Այդ համատեքստի շրջանակներում կաշխատեն նաև ավտոկայանատեղիները, որոնք նախատեսված են հաշմանդամություն ունեցող անձանց համար, սակայն այնտեղ կայանում են այլ ավտոմեքենաներ: Տեխնիկական բնութագիրը մինչև շաբաթվա վերջ պատրաստ կլինի, երթևեկության կազմակերպման հետ կապված թվային լուծումներ կան,

որոնք որ մրցույթի կղնենք և հնարավորություն կունենանք նաև երթևեկությունն ապահովել: Սա այն ամենն է, ինչ այժմ իրականացվում է տրանսպորտի ոլորտում:

Պավել Սարգսյան

-Շնորհակալություն, պարոն քաղաքապետ, 10 կանգառասրահից բացի մենք ծրագրում ենք էլի ունենալ, եթե այո, ապա ո՞ր վարչական շրջաններում:

Հրաչյա Սարգսյան

-Մենք հիմա կունենանք այդ փորձնական կանգառասրահները, եթե ամեն ինչ նորմալ լինի, ապա կբանակցենք վարձակալող կազմակերպության հետ, որպեսզի վերջինս դրանք փոխարինի ավելի արդիական կանգառասրահներով, իսկ եթե ոչ, ապա պետք է փորձենք գտնել իրավական լուծում՝ կանգառասրահները թարմացնելու համար:

Հաջորդ հարցը՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ Արմեն Ներսիսյան, խնդրեմ:

Արմեն Ներսիսյան

-Պարոն քաղաքապետ, հարցս վերաբերում է Շենգավիթ վարչական շրջանին: Գարեգին Նժդեհի փողոցի և Արշակունյաց պողոտայի խաչմերուկում մոտ ապագայում ե՞րբ կունենանք էստակադա, կամ այլ լուծումներ՝ այդ հատվածում ճանապարհները բեռնաթափելու համար: Օրինակ՝ կարելի է «Հայրենիք» կինոթատրոնից դեպի Գարեգին Նժդեհի փողոց գնացող ճանապարհը դառնա միակողմանի, իսկ դեպի 1-ին մաս գնացողը՝ երկկողմանի:

Հրաչյա Սարգսյան

-Շնորհակալություն, էստակադայի կառուցումը կապված է ֆինանսական միջոցների հետ՝ թե երբ կլինեն այդ միջոցները: Ձեր առաջարկած մյուս տարբերակի հետ կապված. Պարոն Հայկ Սարգսյան, այն ծրագրով, որ ձեռք ենք բերել մոդելավորման համար, ուղևորահոսքերը հաշվարկեք և հասկացեք, պարոն Ներսիսյանի առաջարկած տարբերակի դեպքում արդյոք մենք կունենանք ուղևորահոսքի բարելավում, եթե այո, ապա կարող ենք այդտեղ փոփոխություն կատարել, որպես արագ լուծելի հարց, եթե ոչ, ապա հասկանանք, թե ինչու չենք կարող:

-Հաջորդ հարցը՝ ԼՈՒՅՍ խմբակցության անդամ Անի Խաչատրյան, խնդրեմ:

Անի Խաչատրյան

-Հարցս վերաբերում է վարչական շրջանների ղեկավարներին, մասնավորապես, Կենտրոն և Արաբկիր վարչական շրջանների ղեկավարներին: Պարոն Պողոսյան, պարոն Դանիելյան, կամ պարոն Կատվայան, կասե՞ք ինչու՞ եք այդքան վատ աշխատում, ինչու՞ եք այդքան անպետք բաժիններ պահում, ինչպիսին իրավաբանական բաժիններն են: Արդյոք այդ բաժինների աշխատողները չէին աշխատում, և իրենց չլինելով չեն տուժում վարչական շրջանները և, առավել ևս՝ բնակիչները, շնորհակալություն:

Հրաչյա Սարգսյան

-Հարցին կպատասխանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Ավետ Պողոսյանը:

Ավետ Պողոսյան

-Ես կաճում եմ, տիկին Խաչատրյան, Դուք օրակարգի 14-րդ հարցի էությունը մի քիչ խորությամբ չեք ընկալել, հարցը լավ կամ վատ աշխատանքի մասին չէր, այլ վերաբերում էր քաղաքապետի կողմից վարչական շրջանի ղեկավարին և աշխատակազմին տրված գործառույթների մի մասը քաղաքապետարան հետ բերելուն, ինչի հետ կապված բավական լավ քննարկում է եղել, և որոշում կայացնողն էլ Դուք եք եղել:

Հրաչյա Սարգսյան

-Հարցին կպատասխանի նաև Արաբկիր վարչական շրջանի ղեկավար Արամ Դանիելյանը, խնդրեմ:

Արամ Դանիելյան

-Կարծում եմ ժամանակը ցույց կտա դրա արդյունավետությունը: Ես կարող եմ խոսել վարչական շրջանների համեմատության տեսանկյունից, կոնկրետ Արաբկիր վարչական շրջանի մասով ցուցանիշները հասանելի են բոլորին, կարող եք համադրել: Վստահաբար ասում եմ, որ ամենարդյունավետ աշխատող իրավաբանական բաժիններից մեկը Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի իրավաբանական բաժինն է: Սակայն մի կարևոր բան կա, որ իրավաբանական վարչությունը տևական ժամանակ պետ չի ունեցել և կապը իրավաբանական բաժինների հետ ֆունկցիոնալ առումով պակասել է, ժամանակավոր պաշտոնակատարների կողմից

Ֆունկցիոնալ հանձնարարություններ չեն տրվել, երևի դա էլ բերել է այս վիճակին: Սակայն, եթե այս կենտրոնացումն ավելի լավ արդյունք է ապահովելու քաղաքի շահերը ներկայացնելու տեսանկյունից, ուրեմն միայն կողմ եմ: Իսկ այն մեկ աշխատողը, որ մնալու է վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմում, եթե տեսնեն, որ քաղաքացիներին օգնություն կամ խորհրդատվություն ցույց տալու առումով քիչ է, կարծում եմ կարող են ավելացնել:

Անի Խաչատրյան

-Շնորհակալություն, պարոն Դանիելյան, ես հենց այս պատասխանին էի սպասում: Փաստորեն քաղաքապետարանի իրավաբանական վարչության պետ մոտ 3 տարի չունենալու պատճառով մենք այդքան մարդու թողնում ենք առանց աշխատանքի:

Հաջորդ հարցս հետևյալն է. ե՞րբ ենք սկսելու աճուրդներ ունենալ, շնորհակալություն:

Հրաչյա Սարգսյան

-Շատ բարի, արդեն սկսել ենք փոփոխություններ անել, կարծում եմ մի քանի շաբաթից մենք կսկսենք այդ գործընթացը, շնորհակալություն:

Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Արման Անտոնյան, խնդրեմ:

Արման Անտոնյան

-Շնորհակալություն, պարոն քաղաքապետ, հարցս ձևակերպեմ այսպես. արդյո՞ք կընդունեք առաջարկս, ըստ որի՝ փոխքաղաքապետերը, քաղաքապետարանի վարչությունների և բաժինների պետերը յուրաքանչյուր 100 օրը մեկ ներկայացնեն հաշվետվություն իրենց ոլորտներում տիրող իրավիճակի վերաբերյալ:

Հրաչյա Սարգսյան

-Կարծում եմ գաղափարը վատը չէ, պարոն Անտոնյան, կխորհրդակցեմ տեղակալների հետ, հնարավոր է սահմանենք ոչ թե 100 օր, այլ՝ յուրաքանչյուր կիսամյակ, շնորհակալություն:

Արման Անտոնյան

-Երկրորդ հարցս վերաբերում է կանաչապատմանը: Տարբեր մասնագետներ և երևանցիներ ինձ ահազանգել են, որ մարզահամերգային համալիրի տարածքում

ընթացող աշխատանքներում ցուցաբերվում է ոչ մասնագիտական մոտեցում: Ուզում եմ հասկանալ, թե ինչ մասնագետներ են ներառված համալիրի շուրջ կատարվող կանաչապատման աշխատանքներում: Մասնավորապես բարձրաձայնվում է քարերի հետ կապված խնդիրը, որոնք բերվել են միտումնավոր, և որոնց հանումը հետագայում կարող է խորը խնդիրներ առաջացնել:

Հրաչյա Սարգսյան

-Ես Ձեզ վստահեցնում եմ, որ այդ քարերն ուրիշ տեղից բերված չեն, դրանք ժայռային գոյացություններ են, որոնք առաջ են եկել ոռոգման խողովակներն անցկացնելիս՝ փորման ժամանակ: Կարծում եմ, եթե այդ մարդիկ ուզում են համայնքին օգնեն, սոցիալական ցանցերում նման հրապարակում անելու փոխարեն կարող են դիմել մեզ համատեղ քննարկման համար, ներկայացնեն իրենց առաջարկները: Շնորհակալություն, պարոն Անտոնյան:

Հաջորդ հարցը՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար Միքայել Մանրիկյան, խնդրեմ:

Միքայել Մանրիկյան

-Շնորհակալություն, պարոն քաղաքապետ: Առաջին հարցս վերաբերում է վերգետնյա գազի խողովակներին, որոնք անցնում են քաղաքի կենտրոնական փողոցների, ոչ միայն երթևեկելի հատվածներով, այլ նաև բակային, խաղահրապարակների հարակից տարածքներով և իրենցից շատ մեծ վտանգ են ներթափում: Կուզենայի հասկանալ, թե մենք ի՞նչ հնարավորություններ ունենք և ի՞նչ քայլեր կարող ենք ձեռնարկել այս խնդիրը լուծելու համար: Երկրորդ հարցս վերաբերում է քաղաքի խաչմերուկներում կամ շենքերից ձգվող մալուխներին, որոնք կարծես սարդոստայն լինեն քաղաքի վրա և առաջացնում են երևանցիների և զբոսաշրջիկների զայրույթը: Հետագա ինչպիսի՞ լուծումներ կարելի է տալ այս խնդրին:

Հրաչյա Սարգսյան

-Շնորհակալություն, ես կարծում եմ երկու հարցի դեպքում էլ կա ֆինանսական բաղադրիչ, այսինքն Ձեր բարձրացրած երկու հարցն էլ իրենցից ենթադրում են ֆինանսական ծախսեր, և հարցը կայանում է նրանում, թե այդ ֆինանսական ծախսերն ով

պետք է հոգա: Գազի խողովակների դեպքում ենթադրում եմ, որ նախագիծ պետք է արվի խողովակները ստորգետնյա հատվածով անցկացնելու համար, այստեղ պարզ չէ, թե ով է վճարելու այդ աշխատանքները կատարելու համար, սակայն հարցը կարելի է քննարկել գոյություն ունեցող ակնհայտ անվտանգության խնդիրների մասով: Երկրորդ հարցի հետ կապված, չեմ պատկերացնում, թե ինչպես պետք է արվի, բայց կփորձենք որևէ լուծում տալ, այս պահին պատրաստ չեմ պատասխանելու Ձեր հարցին: Շնորհակալություն:

Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Տիգրան Գալստյան, խնդրեմ:

Տիգրան Գալստյան

-Շնորհակալություն, հարցս վերաբերում է Երևանի նոր գլխավոր հատակագծին, ցանկանում եմ իմանալ, թե որ փուլում է գտնվում:

Հրաչյա Սարգսյան

-Շնորհակալություն, կարծում եմ ավագանու հաջորդ նիստին կներկայացնենք այն հայտը, որով մրցույթ ենք հայտարարելու: Այս պահի դրությամբ «Երևաննախագիծ» ՓԲԸ-ն արդեն նախապատրաստական աշխատանքներն է անում, և մոտ 1,5-2 տարի կտևի, մինչև ամբողջական տարբերակն ունենանք: Միևնույն ժամանակ իրականացնում ենք ընթացիկ որոշ աշխատանքներ, որոնք հետագայում՝ մրցույթը հայտարարելուց հետո, կներառենք գլխավոր հատակագծի մեջ: Այս պահի դրությամբ ՀՀ կառավարության որոշման համաձայն միջգերատեսչական հանձնաժողովին է ներկայացվել տեխնիկական բնութագիրը՝ հաստատելու համար:

Տիգրան Գալստյան

-Շնորհակալություն, պարոն քաղաքապետ:

Երկրորդ հարցս վերաբերում է տրանսպորտին: Ինչպես ասացիք, մինչև տարեվերջ պատրաստվում եք ներկրել 12 մետրանոց ավտոբուսներ: Ես, անկեղծ ասած, չեմ պատկերացնում, թե այդ 12 մետրանոց ավտոբուսները Երևան քաղաքում ինչպես են շարժվելու: Արդյոք չե՞ք գտնում, որ մեզ ավելի անհրաժեշտ է 50-100 միկրոավտոբուս, քան այդ 12 մետրանոց ավտոբուսները:

Հրաչյա Սարգսյան

-Ոչ, պարոն Գալստյան, այդպես չեմ գտնում:Մենք ունենք միջազգային կազմակերպության կողմից արված վերլուծություն: Խնդիրը ոչ թե ավտորուսների չափերի հետ է կապված, այլ՝ երթևեկության վատ կազմակերպման: Այն պետք է վերահսկվի ժամանակակից մեթոդներով, շնորհակալություն:

- Հաջորդ հարցը՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ Մարկոս Հարությունյան:

Մարկոս Հարությունյան

- Պարոն քաղաքապետ, Արզումանյան փողոցի հ.10 և հ.17 4-րդ կարգի վթարային շենքերի բնակիչների խնդրանքով դիմում եմ Ձեզ: Մոտ 20 օր առաջ նրանք եղել են Ձեզ մոտ ընդունելության և խոստացել եք, որ 10 օրվա ընթացքում պատասխան կտրվի բնակիչներին, սակայն պատասխան չի տրվել: Խնդրում եմ պարզաբանեք ի՞նչ լուծում է տրվելու այդ հարցին:

Հրաչյա Սարգսյան

-Այս պահի դրությամբ պատասխան չունեմ, գույքագրում է իրականացվել, կարծում եմ մինչև շաբաթվա վերջ կամփոփենք գույքագրման արդյունքները և կտրվի պատասխան:

Մարկոս Հարությունյան

- Կարելի է իմանալ, թե ի՞նչն է գույքագրվել:

Հրաչյա Սարգսյան

-Ընդհանուր շենքն է գույքագրվել՝ մակերեսը և թե քանի բնակիչ կա:

Մարկոս Հարությունյան

- Պարոն քաղաքապետ, խնդրում եմ այս հարցին լուծում տալ: Երեք ու կես տարի է այս հարցը քննարկվում է, սակայն լուծում չի ստանում:

Երկրորդ հարցս վերաբերում է «Երևանի աղբահանություն և սանիտարական մարքում» համայնքային հիմնարկին: Եթե Երևան համայնքի բյուջեով այս հիմնարկին մեծ գումար է հատկացվել, որից 400.000 հազար դրամական պարգևավճարներ են ստացել, ապա ինչու՞ է 30 մեքենա խափանված և ո՞վ է պատասխանատու խափանված գույքի համար:

Հրաչյա Սարգսյան

-Նախ պետք է արձանագրենք, թե ում կողմից է այդ խնդիրն առաջացել, այս պահի դրությամբ իրականացվում է գույքագրում: Գույքագրման ավարտից հետո կուսումնասիրվի արդյոք կա պայմանագրով վարորդների վրա դրված պատասխանատվություն, թե ոչ, կընդունվի որոշում: Այս պահի դրությամբ ամփոփ տեղեկատվություն չկա, դեռ ընթացքի մեջ է:

Մարկոս Հարությունյան

-Շնորհակալություն, պարզապես ես շատ հաճախ եմ լինում «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկում, գիտեմ, որ հիմնարկն ունեցել է մասնագետ, ով բերում էր պահեստամասերը և մեխանիկը վերանորոգում էր մեքենաները:

Հրաչյա Սարգսյան

-Շատ դեպքերում մեքենաներն ուղարկվել են վերանորոգման կենտրոն, մի մասն է հիմնարկում վերանորոգվել: Պետք է պարզել, թե որ մեքենան և ինչ մեքենամասեր են վերանորոգվել հիմնարկի մեխանիկի կողմից և որոնք վերանորոգման կենտրոնում:

Մարկոս Հարությունյան

-Եղավ պարոն քաղաքապետ, 10-օրյա ժամկետում ես գրավոր հարցադրում կներկայացնեմ գործընթացի մասին տեղեկատվություն ստանալու համար:

Հրաչյա Սարգսյան

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Լևոն Զաքարյան, խնդրեմ:

Լևոն Զաքարյան

-Շնորհակալություն, առաջին հարցս հետևյալն է. արդյոք մոտ ժամանակներում քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչությունում սպասվում է նոր կառուցվածքային փոփոխություն, եթե այո, ապա ի՞նչ ձևով:

Հրաչյա Սարգսյան

-Շնորհակալություն, այո՛, փոփոխություններ սպասվում են: Այժմ իրականացնում ենք գործընթացի վերլուծություն, կատարում ենք գործառույթների գույքագրում: Իհարկե, այստեղ մեծ աշխատանք կա կատարելու, բայց, կարծում եմ, ավագանու հաջորդ նիստին մենք հնարավորություն կունենանք Ձեզ մանրամասն տեղեկատվություն տրամադրելու:

Լևոն Զաքարյան

-Շնորհակալություն, հաջորդ հարցս վերաբերում է բնակֆոնդին: Կցանկանայի իմանալ արդյոք նախատեսված են աշխատանքներ Երևանի վթարային շենքերի վիճակի բարելավման հետ կապված, մինչև հարցին գլոբալ լուծում տալը:

Հրաչյա Սարգսյան

-Շնորհակալություն, պարոն Զաքարյան: ՀՀ կառավարությունում այժմ շրջանառվում է այն հայեցակարգը, թե մաշված բնակֆոնդի փոփոխությունն ինչպես պետք է իրականացվի: Երևան համայնքն, ըստ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի, պարտավորություններ չունի 3-րդ կամ 4-րդ կարգի վթարային շենքերի հանդեպ, դրանք համարվում են քաղաքացու սեփականությունը: Համայնքն ուղղակի կարող է աջակցել իր հնարավորության շրջանակներում:

Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Մանուել Մարգարյան, խնդրեմ:

Մանուել Մարգարյան

-Հարցս վերաբերում է կոմունալ տնտեսության վարչությանը: Ուզում եմ հասկանալ, թե ինչպիսի՞ հսկողություն է իրականացնում վերջինս համատիրությունների ղեկավար մարմինների նկատմամբ՝ ունենալով նույնիսկ վարչական արձանագրություն կազմելու լիազորություն:

Հրաչյա Սարգսյան

-Հարցին կպատասխանի քաղաքապետի խորհրդական Կամո Արեյանը:

Կամո Արեյան

-Եթե Ձեզ հետաքրքրում է հարցի իրավական կողմը, ապա «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին», ինչպես նաև «Համատիրության մասին» գործող օրենքներով համայնքի ղեկավարին վերապահված է միայն մեկ լիազորություն՝ վերահսկողություն պարտադիր նորմերի պահանջների պահպանման նկատմամբ:

Երկրորդը՝ Ձեր ասած վարչական իրավախախտումը վերաբերում է հաշվետվություն չներկայացնելուն, որի դեպքում վարչական իրավախախտման վերաբերյալ որոշում է կայացնում ղեկավարը: Երևան քաղաքում այդ գործողությունը պատվիրակված է վարչական շրջանների ղեկավարներին: Մնացած դեպքերում ամբողջությամբ համատիրությունը կամ կառավարման այլ մարմինը ղեկավարվում է իրենց մասին գոյություն ունեցող և գործող օրենքներով: Այժմ օրենսդրական որոշակի պարզություններ են մտցրել: Խոսքը վերաբերում է առանձին շենքերի անհատական բանկային հաշիվներ բացելուն և գանձումներն անկանխիկ կատարելուն: Դրանք դեռևս արդյունք չեն տվել: Մենք՝ պարոն քաղաքապետի հետ, քննարկել ենք թեման, այստեղ համալիր մոտեցում է պետք: Այն տպավորությունը, թե այս առանձին փոփոխություններով հարցը կլուծվի, մոլորություն է: Դրանք ընդամենը «կարկատաններ» են գործող օրենքում: Մեր դիրքորոշումն այն է, որ պետք է լինի համալիր մոտեցում, այսինքն մեկ պարզ նախադասությամբ՝ պետք է ընդունվի «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» նոր օրենք՝ ինստիտուցիոնալ նոր փոփոխությամբ: Բարոյապես մաշվել են ԺԷԿ-ի իրավահաջորդը հանդիսացած այս կազմակերպությունները, իրավաբանական այս անձինք, ինքնակառավարման այս ձևը: Մենք զեկուցել ենք պարոն Սարգսյանին մեր մոտեցումները: Կա միջգերատեսչական հանձնաժողով, պետք է ուղղակի կառավարությունը օրենքի փոփոխությունը դարձնի առաջնահերթ, անհետաձգելի, ընդունվի համալիր փոփոխություններով նոր օրենք, որպեսզի դրվի գործողության մեջ: Սա է մեր դիրքորոշումը:

Մանուել Մարգարյան

-Երկրորդ հարցս վերաբերում է Թումանյան 2-րդ անցուղու հ.5/9 բազմաբնակարան շենքի շինարարության թույլտվությանը: Արդյոք եղել է հանրային քննարկում այդ շինարարության թույլտվությունը տրամադրելուց առաջ:

Հրայր Սարգսյան

-Հարցին կպատասխանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման ծրագրերի բաժնի պետ Անդրանիկ Սեդոյանը:

Անդրանիկ Սեդոյան

-Տվյալ հասցեում կառուցապատումն իրականացվում է համաձայն գոտիավորման նախագծի: Որքան էլ անսովոր հնչի, այո՛, մենք Երևան քաղաքի կենտրոնի գոտիավորման նախագծով տվյալ հատվածում ունենք բազմաբնակարան բնակելի կառուցապատում: Հաշվի առնելով, որ գոտիավորման նախագիծն, ըստ ընթացակարգի, մինչ հաստատումը ենթարկվում է հանրային իրազեկման, հետևաբար, նախագծման թույլտվության տրամադրման շրջանակներում իրազեկում չի անցկացվել: Բայց տեղի են ունեցել այլ միջոցառումներ, որոնք ևս կարևոր են, այսինքն հարցը ներկայացվել է քաղաքաշինական խորհրդին, ստացվել է վերջինիս եզրակացությունը, հետո նախագիծը ենթարկվել է պետական համալիր փորձաքննության: Այսինքն հանրային իրազեկման հարց չի դիտարկվել, որովհետև գոտիավորմանը համապատասխան է արվել: Սակայն իրազեկման փուլ նաև համարվում է Երևան համայնքի պաշտոնական համացանցային կայք էջում տեղադրված թույլտվությունը, ինչպես նաև շինարարական հրապարակի կազմակերպման ժամանակ կատարված իրազեկումը:

Հրաչյա Սարգսյան

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Դիանա Քերոբյան, խնդրեմ:

Դիանա Քերոբյան

-Հարցս վերաբերում է Նոր Նորք վարչական շրջանի Բաղալ Մուրադյան փողոցից դեպի Մառի նրբանցք տանող հատվածին, որը բավական խիտ է բնակեցված, սակայն այդտեղով անցնող հետիոտնի զառիվայր ուղին և աստիճանները, որոնք կառուցվել են 1980-ական թվականներին, այժմ կիսաքանդ վիճակում են, իսկ հորդառատ անձրևների ժամանակ այդտեղով գետ է հոսում: Բնակիչներն օգոստոս ամսին դիմել են՝ այդտեղ ջրահեռացման համակարգ նախատեսելու և բարեկարգման համար, սակայն ստացել են պատասխան, որ 2021 թվականի ծրագրով այդ բարեկարգումը նախատեսված չէ, կնախատեսեն մյուս տարիներին: Ցանկանում եմ տեղեկանալ՝ այս տարի նախատեսվել է դա, թե՛ ոչ:

Հրաչյա Սարգսյան

-Հարցին կպատասխանի քաղաքապետի խորհրդական Կամո Արեյանը:

Կամո Արեյան

-Ավագանու անդամի բարձրացրած հարցը մեզ հայտնի է: Կոմունալ տնտեսության վարչության և վարչական շրջանի ղեկավարի հետ կաշխատենք գտնել այդ խնդրի լուծման ֆինանսական ծավալը, եթե հնարավոր լինի՝ կփորձենք այդ հատվածի վերակառուցումն ու նորոգումն իրականացնել հրատապ ծրագրերի շրջանակներում: Կխնդրեմ մեկ շաբաթ ժամանակ՝ հստակ պատասխանելու համար:

Դիանա Քերոբյան

-Շնորհակալություն, ևս մեկ հարց ունեմ: Այն վերաբերում է Բաղալ Մուրադյան փողոցի հ.3 հասցեում գտնվող «Տիտան» սուպերմարկետի (նախկին ռադիոտեխնիկայի խանութ) դիմացի մայթային մոտ 20 մետր հատվածին, որն այժմ դարձել է ավտոկայանատեղի, իսկ դա դեպի սուպերմարկետ տանող միակ հետիոտնային ճանապարհն է: Արդյոք մեքենաները թույլտվություն ունեն մայթային հատվածում կայանելու, ինչը շատ վտանգավոր է դարձել քաղաքացիների համար:

Հրաչյա Սարգսյան

-Շնորհակալություն, տիկին Քերոբյան: Հայկ Սարգսյան, խնդրում եմ այս հարցն ուսումնասիրել և հաջորդ գործակարգավարական խորհրդակցության ժամանակ զեկուցել:

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Անուշ Քլոյան, խնդրեմ:

Անուշ Քլոյան

-Հարգելի քաղաքապետ, մարտի 1-ի զոհերի հիշատակին նվիրված հուշարձանի կառուցման համար նախատեսված գումարը ՀՀ կառավարությունը երկար ժամանակ է, ինչ փոխանցել է. ի՞նչն է պատճառը, որ այդ աշխատանքները չեն իրականացվում և, եթե այդ աշխատանքներն սկսեն, կա՞րդյոք որոշակի ժամկետ, որի ընթացքում այն ավարտին կհասցնեն:

Հրաչյա Սարգսյան

-Հարցին կպատասխանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վիլեն Արևշատյանը:

Վիլեն Արևշատյան

-Պարոն քաղաքապետ, հուշարձանի գումարը փոխանցվել է 2021թ. դեկտեմբերի վերջին և նախատեսվել է այսօրվա լրամշակված բյուջեի շրջանակում, իսկ մրցութային մասով տեղեկատվություն կներկայացնի մշակույթի և տուրիզմի վարչության պետը:

Գոշ Սարգսյան

-Ի հավելումն պարոն Արևշատյանի ներկայացրածի, ասեմ, որ քանդակագործ Ալբերտ Վարդանյանի հետ մենք կապի մեջ ենք, նախնական քննարկումների արդյունքում, պարոն Վարդանյանի հավաստմամբ, պետք կլինի մոտ 6 ամիս, քանի որ հուշարձանը պետք է ձուլվի Ռուսաստանի Դաշնությունում, հետո նոր բերվի Հայաստան:

Անուշ Քլոյան

-Շնորհակալություն, հաջորդ հարցս վերաբերում է 67 համարի երթուղուն, որն սպասարկում էր Ներքին Չարբախը: Այժմ հասկանալի պատճառներով դադարեցրել է իր աշխատանքները, որն էլ առաջացրել է բնակիչների դժգոհությունը: Հարցս հետևյալն է. արդյոք նոր ավտոբուս կսպասարկի հենց այդ երթուղին:

Հրաչյա Սարգսյան

-Շատ բարի, հարցին կպատասխանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Հայկ Սարգսյանը:

Հայկ Սարգսյան

-67 համարի երթուղին դադարեցվել է, քանի որ սպասարկման 15 տարին լրացել էր: Ներքին Չարբախի հետ կապված՝ մենք փոփոխություններ կատարեցինք 54 և 14 համարի երթուղիներում, այսինքն գծի երկարացում արեցինք և մոտեցրեցինք բնակիչներին, իսկ 67 համարի երթուղին, քանի որ սպասարկում էր մինչև Փարաքարի հատվածը, այդտեղ փոփոխության ենթարկեցինք 37 համարի (միկրոավտոբուս) երթուղին, որպեսզի այդտեղի բնակչությանը նույնպես օգտվի: Նոր երթուղուն կանդրադառնանք հաջորդ փուլում:

Հրաչյա Սարգսյան

-Այսինքն հաջորդ փուլում այն ժամանակ, երբ նոր շարժակազմ կունենանք, իսկ տեղաշարժման խնդիրը, որպես այդպիսին, լուծել ենք: Միգուցե դեպքեր կլինեն, որ քաղաքացին պետք է 100-150 մետր քայլի, հետո տրանսպորտ նստի: Կարծում եմ ճիշտ

կլինի, որպեսզի լրատվության վարչությունը լավ լուսաբանի, թե փակվող երթուղիների փոխարեն ինչ ենք առաջարկում քաղաքացիներին: Շնորհակալություն:

-Հաջորդ հարցը՝ Երևան քաղաքի ավագանու անդամ Սերգեյ Գյոզալյան, խնդրեմ:

Սերգեյ Գյոզալյան

-Շնորհակալություն, առաջին հարցս վերաբերում է գազապաստարաններին և ոմբապաստարաններին. ուզում եմ տեղեկանալ, և մեր քաղաքացիներն էլ տեղեկացվեն, թե ի՞նչ աշխատանքներ են իրականացվել այդ ուղղությամբ, կամ արդյոք իրականացվել են, քանի որ կայծակնային արագությամբ միջազգային իրավիճակ է փոխվում, և ամեն ինչին պետք է պատրաստ լինենք:

Հրաչյա Սարգսյան

-Շնորհակալություն, պարոն Գյոզալյան, կարծում եմ ոչ միայն մեր բնակիչները կտեղեկանան, այլ նաև՝ պոտենցիալ հակառակորդները: Աշխատանք արվում է, վերջին գործակարգավարական խորհրդակցության ժամանակ վարչական շրջանների ղեկավարների ու գորահավաքային հարցերի և քաղաքացիական պաշտպանության վարչության հետ քննարկում ենք ունեցել, հստակ հանձնարարական կա, յուրաքանչյուր երկուշաբթի ամփոփելու ենք նախորդ շաբաթվա կատարած աշխատանքները: Կարծում եմ համատիրությունների և շենքերի լիազորների միջոցով իրենք կտեղեկանան կատարված աշխատանքների մասին: Ես վստահեցնում եմ, որ հարցը մեր ուշադրության կենտրոնում է:

Սերգեյ Գյոզալյան

-Շնորհակալություն, երկրորդ հարցս հնչեցնեմ. Արցախի բնակչությունն այսօր ոչ միայն գազագրկված է, այլ նաև՝ հոսանքազրկված: Երևանի քաղաքապետարանն իր կողմից ի՞նչ միջոցառումներ է նախատեսում, որպեսզի օգնենք մեր հայրենակիցներին:

Հրաչյա Սարգսյան

-Հարց ու պատասխանի ավարտից հետո ես կխոսեմ Ստեփանակերտի քաղաքապետի հետ և կհասկանամ, եթե կարիք լինի որևէ կերպ աջակցելու, ապա անպայման կցուցաբերենք այդ աջակցությունը, այդ մասին նույնիսկ խոսելն ավելորդ է, քանի որ մենք միշտ կանգնած ենք Արցախի Հանրապետության կողքին:

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Արման Բաբաջանյան, խնդրեմ:

Արման Բաբաջանյան

-Շնորհակալություն, պարոն քաղաքապետ, առաջին հարցս վերաբերում է, թե բարեկարգման ի՞նչ ծրագրեր կան Արաբկիր վարչական շրջանում, որոնք սկսվել են և պետք է ավարտվեն այս տարի և հանձնվեն վարչական շրջանի բնակիչների շահագործմանը և ի՞նչ ծրագրեր կան, որ պետք է սկսվեն այս տարվա ընթացքում:

Հնչեցնեմ նաև երկրորդ հարցս, պարոն քաղաքապետ. Այն վերաբերում է «Հաղթանակ» զբոսայգուն: Ժամանակին շատ էր խոսվում ներդրումային ծրագրի, այգին բարեկարգելու, նոր ատրակցիոն խաղեր տեղադրելու մասին: Որքան հասկանում եմ, այդ ծրագիրն այդպես էլ չիրականացավ, քաղաքում արդեն ունենք նոր մեծ այգի՝ Երևան Պարկը: Գուցե մտածենք «Հաղթանակ» զբոսայգին կանաչապատելու և համայնքին վերադարձնելու, նոր կանաչ, գեղեցիկ այգի ունենալու մասին:

Հրայր Սարգսյան

-Հարցին կպատասխանի Արաբկիր վարչական շրջանի ղեկավար Արամ Դանիելյանը:

Արամ Դանիելյան

-Շնորհակալություն հարցի համար: Արաբկիր վարչական շրջանում այս տարվա ծախսային բյուջեն շուրջ 3 միլիարդ դրամ է, որից 1 միլիարդից մի քիչ ավելը ֆոնդային ծախսերն են, այսինքն կապիտալ ծախսերն են բարեկարգման շրջանակներում: Բացի դրանից, այս տարի Արաբկիրում բավական մեծ ներդրում է արվել՝ կապված ճանապարհաշինության հետ: Ժամանակի ընթացքում մոտ 300-350 մլն դրամը ծախսվել է գերակա շահի փոխհատուցման և շուրջ 200 մլն դրամը՝ ճանապարհի շինարարության վրա: Առաջին փուլն արդեն ավարտվել է, այսինքն՝ պետական գերակա շահի մասով փոխհատուցումները հիմնականում կատարված են, մեր բնակիչները որևէ դժգոհություն չունեն, պայմանագրերը կնքել են և իրենց գումարներն ստացել են: Այս տարի մրցույթն

արդեն կայացել է, և Արամ Խաչատրյան-Մամիկոնյանց փողոցներում ճանապարհի շինարարությունն այս պահին գործնական փուլում է: Շինարարի հետ քննարկվել է նաև այնտեղ կառուցված ապօրինի ավտոտնակների ապամոնտաժման հարցը, ինչի հետ մեկտեղ կտրվի շինարարության մեկնարկը: Բացի մեր ծախսային ծրագրերից, Արաբկիրում միայն այս ճանապարհի շրջանակներում մեկ այլ խոշոր շինարարություն ևս կկատարվի՝ շուրջ 500 մլն դրամի չափով: Ծրագրում նախատեսված է նաև Կասյան փողոցին հարող տարածքը որպես հրապարակ ձևավորելու և հետո՝ շինարարություն կատարելու նախագիծը: Ինչպես նաև լրացել է Մերգեյլանի այգու վարձակալներից մեկի կողմից վարձակալության ժամկետը, ինչի շրջանակներում էլ պլանավորվում է տարածքը «ազատագրել» վարձակալներից և պատշաճ տեսքի բերել, որպեսզի այն ծառայի որպես այգի՝ բնակիչների և հյուրերի համար: Ծրագրեր էլի կան, դրանք հիմա քննարկման փուլում են: Բացի դրանից կատարում ենք ընթացիկ աշխատանքներ՝ բակերի բարեկարգում, եզրաքարերի փոխարինում, նոր մայթերի կառուցում: Այս տարի պլանավորել ենք նաև 6 մայթի բարեկարգում և հիմնանորոգում: Անցյալ տարվանից մեկնարկել է և այս տարի կավարտվի «Նոր Արաբկիր» զբոսայգու բարեկարգումը և հիմնանորոգումը, որն արվում է Երևան քաղաքի ծրագրով, ինչի համար հատկացվել է 300 մլն դրամ:

Հրաչյա Սարգսյան

-«Հաղթանակ» զբոսայգու հետ կապված ասեմ, որ կանաչապատման աշխատանքներ իրականացնելու համար շատ կարևոր էր, որպեսզի այնտեղ ունենայինք ոռոգման համակարգ, և անցած տարի նախագիծ էր պատվիրվել շինարարական աշխատանքների համար, որոնք այժմ ավարտվել են, և մենք հնարավորություն կունենանք այնտեղ ապահովելու համապատասխան ծավալի ջրի քանակ: Այո՛, ես համամիտ եմ, մենք կարող ենք այնտեղ ծառերի տնկման աշխատանքներ իրականացնել, սկզբում՝ համայնքին պատկանող տարածքների վրա, այնուհետև կմտածենք վարձակալված տարածքների մասին:

Շնորհակալություն, ավարտվեց հարց ու պատասխանը, ավագանու հարգելի անդամներ, հարգելի գործընկերներ, Երևանի ավագանու 8-րդ նստաշրջանի 2-րդ նիստը հայտարարում եմ փակված: Շնորհակալություն, ցտեսություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀՐ. ՍԱՐԳՍՅԱՆ

Կազմեց՝ Ա. Գևորգյան